321. ՋԱՆԳՅՈՒԼՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԽԱՂԻԿՆԵՐ

1. Մտել եմ ջուրը խոր ա,
Քյաթան շապիկս նոր ա,
Խաբար տարեք իմ նանին,
Դարբեդար ես կորա:

2. Ախ կանեմ, արին կգաս,
Քոմակս բարին կգաս,
Դարիք, դարիք մեռնում եմ,
Վրես էլ ուգյուն չկա:

3. Գել եմ գցել հանդերում,
Թուխ կոռոչում, բանդերում,
Դանակ բերեք, սիրտը բանամ,
Բուդում-բուդում դարդերում:

4. Սարերը սըոսըոում ա,
Ամպերը գըոգըոում ա,
Էսօր յարիս տեսել չեմ,
Իմ սիրտը մըոմըոում ա:

5. Հարավ քամին գալիս ա,
Մեր դռանը տալիս ա,
Մերիկ, ելի դուռը բաց,
Դարիք բալեդ գալիս ա:

6. Ամպեր մի քիչ հով արեք,
Անչվեր թափեք, ծով արեք,
Դուշմանի էլ ու գյունը
Սև ծովի տակովն արեք:

7. Պարտեվ եմ, չափար չունիմ,
Ես կտրիճ եմ, յար չունիմ,
Ձեռնես էլավ դորվանը,
Ջահել եմ, խաբար չունիմ:

8. Ամպել ա, պլարվում չի,
Գիրն ու դալամ սապրմ չի,
Էս իմ պղաորած սիրաս
Հեչ մի օրըմ պարվում չի:

9. Ցոթը սարի քամակ,
Ցոթը սարի քամակ,
Հասցեդ չունեմ, յարո ջան,
Վրեդ գրեմ նամակ:

10. Դեմին էլրավ էրակը,
Սիրտս լցված կրակը,
Ինչ ապատեք, թե կարաք,
Թե չէ էգուց կմեռնեմ,
Ես անխանչալ, անդանակ:

11. Մանի, մանի, ման բերան,
Սելը տանի ջուխտ գերան,
Գեշը սիրունի ծոցը,
Հե՜յ վախ ու հապար բերան:

12. Անչրևն էլրավ ցողալեն,
Ուռի ծառը դողալեն,
Հրեն էլրավ իմ յարը,
Ալ չին աակը խաղալեն:

13. Միրել եմ, սերն էրեսին
Անթառամ թերն էրեսին,
Ով որ իմ սիրածն առնի,
Սաածու կրակն էրեսին:

14. Կապուտակ չին հեծել եմ,
Սրալին մոտացել եմ,
Արա՛կ, թող տուր ես անցնեմ,
Սիրածիս կարոտել եմ:

15. Ջաղացս ման եմ տվել,
Միրել եմ, ջան եմ տվել,
Տասերկու տարվա մեջը,
Մե օր պայման եմ ավել:

16. Թուխ նասկի եմ արել,
Թուխ նասկի եմ արել,
Հո սիրուն չես, յար ջան,
Քոյիդ եմ հավանել:

17. Ծալիկ եմ հոտով-մոտով,
Էկա, անցա քո մոտով,
Աչքս քցի, սիրեցի,
Ես մնացի կարոտով:

18. Սարիս տակին սառն ախպուր,
Էրկաթե թաս, ոսկե ջուր,
Մեկ ես խմեմ, էրկու՝ դու,
Սիրով լինենք ես ու դու:

19. Արապն անցա են կուռը,
Քաղեցի Գյանջա նուռը,
Ախ, իմ սիրած գյոպալը,
Քաշեցին խանի դուռը:

20. Պարտեզ ունեմ, դրախտ ա,
Ծաղիկ-ծաղկունքի վախտ ա,
Գեշ աղջիկը՝ լաւ սաղոց,
Էդ էլ մի ուրիշ բախտ ա:

21. Քարափի ծերին կանչի,
Թող թշնամին ամանչի,
Արևիդ մեռնեմ, յար ջան,
Չինարի պես կանանչի:

22. Գյուլում, գյուլում, գյուլ չիչակ,
Ես, դու մանենք մեկ փչակ,
Ցուրի լիսը քչփչանք,
Լիսեն եդը կըշկըշանք:

23. Օխտը թփիս վարդ պոկեցի,
Իմ պոկածը դուն ես, դուն,
Ծատ շաաերիս քեզ սիրեցի,
Իմ սիրածը դուն ես, դուն:

24. Մանի ասեմ ու շարեմ,
Լցնեմ առպրակն ու կարեմ,
Քաղքեքաղաք ման ածեմ,
Սրտիս ուպածը ճարեմ:

25. Կարովս քոչ ա գընում,
Քոչս քոչի մեջ ա գընում,
Էրնեկ են աղջկա աչքին,
Օխտն ախպոր մեջ ա գընում:

26. Գյուլում կասեմ, կշարեմ,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Տոպրակ կածեմ, կկարեմ,
Ջան գյուլում, ջան, ջան:

27. Ծաղիկ եմ քաղե նարնջի,
Ջան գյուլում, ջան, ջան,
Այ տղա, վեր արի, փնջի,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

28. Արի ելենք սարը,
Ջան գյուլում, ջան, ջան,
Բոնենք կլոր պարը,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

29. Մեր բլուդի եղը,
Ձեր բլուղի եղը,
Նիկոլան էլ ընկավ,
Լենինն էկավ տեղը:

ՕՐՈՐՈՑԱՑԻՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԱՌՏՆԻՆ ԿԵՆՑԱՂԱՑԻՆ ԵՐԳԵՐ

322. 1. Նանա բալիկս, նանա
Օրրդ ավելսնա, նանա
Մենչատերև թաթաշոր,
Մանրատերև ոտաշոր,
Քամին փչի, օրորի,
Լուսին վրեդ ոլորի,
Քամին կգաս ժաժ կտա,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգյար չունի, քիչ կտա,
Ոտով կտա, թոլ կանի,
Նանա բալիկս, նանա:

2. Նանիկ, նանիկ, իմ լալա,
Երկար օրեր ունենաս,
Նանիկ բալա կանչել եմ,
Ճերմակ բարուր արել եմ:
Նանա, նանիկ, իմ բալիկ,
Նանա, օրոր եմ ասում,
Երկար օրեր ունենաս:

323. 1. Դընգ, դընգ դնգոցը,
Մեղրով լիքը քթոցը.
Քոչ ոչխարի դմակը,
Սառն աղբյուրի շվաքը.
Դընգ, դընգ, դնգոցը:

2. Դան, դան, դան կասեմ,
Իմ ընեխին ջան կասեմ,
Դան, դան, դան դնդոցը,
Իմ ընեխի թնդոցը,
Մեղրով լիքը քթոցը,